

ՆԱՄԱԿ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԱՌ. Հ. ՂԵՌՈՂԻ ԱԼԻՇԱՆՆ

Հոգի սիրահար հայրենեաց Հայր Ղերող Ալիշանեան

Նահատակեալ աղէկէզ հոգւով ի սիրտ, ի յոյր, ի կոծ,
վասն Հայրենեաց

Ազնուախալ սիրուն հարագատիղ պատկերով կիսով չափ կը
նանչնամ գճեզ, Հայր, իսկ հայրենասիրական գրուածոց մէջը, Շա-
ւարշական դաշտին մէջ, Պիւլսիւ Աւարայրիին մէջ, դառն ողբերուդ
մէջ, անուշակ երգերուդ մէջը, Բագմավէպներուն մէջ, ընտիր ընտիր
նատերուն մէջ, Մասեաց շուքին տակ, Հրագդան գետին եզերք: Այո՛,
լաւ կը նանչնամ գեեզ, դու մեր հայրենեաց հանրածանօք մատենա-
գիրն ես, ո՞վ է որ քեզ չի նանչնար: Բայց չեմ գիտեր, հայրենի աւե-
րակաց մէջ բնակող հէզ Արծուի մի կայ, դուք ալ գանի կը նանաչէ՞ք,
որ նա ես ձեզ նման գիշեր ու ցերեկ հայրենեաց հրով կը տոչորի:

Հայր, կ'աղաչեմ, որ ըսես ինձի, այս դարը երկու թշուառ սի-
րահարներ ծնած է մեր հայրենեաց համար, այս երկուէն ո՞րն ա-
ռաւել թշուառ է, դո՞ւ արդեօք, որ Սուրբ Ղազարու մատենագիտ
նստած երեսակայութեամբ միայն կը շրջիս Հայաստան, կ'ողբաս ու-
րա վաղեմի փառք, կ'ողբաս նորա աղէտներ եւ ի վերջոյ կը յուսա-
հատիս ապագայ չարեաց համար: Իսկ հէզ Արծիւր իրաւապէս թըշ-
ուառ է գիտե՞ս, հայրենի գաւակները տոչորող բաբելոնեան հնոցին
մէջն է, աղփատութեամբ, թշուառութեամբ հայրենի երկրէն զաղ-
քող գաւակներուն յուղարկւաւորն է: Վասպուրականէն ի Տարսն, Տա-
րսնէն ի Վասպուրական յուսակտուր բռնչելով միշտ, գիտես թէ երկու
մեծ հայրենեաց աւերակները կը չափէ. ամէն դժնդակ դէպքերուն
ականատես է, ամէն վշտահար դժբախտներուն վշտակից. մէկ խօս-
եալ հայրենի մնացորդ թշուառ գաւակներուն հետ սրտամաշ կարեկ-
ցութեամբ չարչարեալ:

Ահա այս է բաժին եւ բախտ հէզ Արծույն: Իսկ դու, նազելի
Հայր, որ Հայրենեաց աղէտները միայն երեսակայութեամբ նշմարե-
լով ազատ կողմիդ գրկէն կը հառաչես ու կը հեծես, ու սրտիդ ան-
հուն ցաւերը միայն ողբերով կը սփոփես, եւ պահ մի դարձեալ դիւր
տալով սրտիդ կը մխիթարիս ազատութեան մէջ, քաղաքականութեան
մէջը, եղբայրական ուխտին մէջը, եւ մանաւանդ գրաւոր քաղցր աշ-
խատութեան մէջը, որ ամէն ցաւոց կիրքերը կը փարատեն: Բայց այս
սփոփանքները ի սպառ կը պակսին խեղճ Արծույն համար, զի նորա
նակատագիր ողբ, կոծ եւ լաց է դրոշմուած: Թող տանք այս կէտերը,
եթէ ցաւով մրցինք իրարու հետը՝ Արծիւր միշտ յաղթող է:

Պատուական Հայր, Ազա Սերովբէն Զեր սրտին քարգման ըլ-
լալով, կը խօսի միշտ՝ դուք անսահման փափաք մը ունիք նանա-
պարհորդութիւն մը ընել ի Հայաստան: Հայր, եփրատին ցուրը պա-

տրաստ է, ո՞վ է որ կ'արգելու զԶեզ ի մկրտելոյ: Այդ փափագը վեհ եւ ցանկալի է, փութա կատարել, Հայր, մինչդեռ Արծիւը ողջ է, նա կը խոստանայ զԶեզ հայրենեաց անմատոյց խորշերն անգամ ա-մենայն ապահովութեամբ շրջեցունցանել, եթէ հաւատաք քէ Արծիւը հաւատարիմ է: Մուտ եւ տես զՀայաստան, շրջիր Այրարատ, խմիր երախայ սուրբ ջուրը, լողացիր Եփրատին մէջ, Անուոյ աւերակնե-րուն վրայ ողբա՛, Բիւրակնեան լեռանց ծաղիկները քաղելով հոտ առ ու գմալիր: Հոգ մի՛ ընեիր Հայրենիք տխուրութեան դառն հաշակնե-րուն հետը ուրախութեան քաղցր հաշակներ ալ ունի, քէ միով վըշ-տանաս, միւսովն ալ կը սփռփուխ անշուշտ: Կատարէ Աստուած Զեր եւ մեր այս ցանկալի փափագը:

Գրութեանս վերջը Զեր հայրութեան ալ իմացնել կ'ուզեմ, առ Հ. Արսէն խնդրանաց նամակ մի գրած եմ վանեցի պատանեկի մը հա-մար, որ Փարիզու Մուրատեան վարժարանին մէջը ընդունուի, իբրեւ ճրիւղարժ աշակերտ: Այս խնդիրը ի գլուխ ելլելու համար, Հայր Արսէնի միջնորդութեան հետը Զեր զօրաւոր միջնորդութիւնն ալ կը խնդրէ Արծիւը: Գիտեմ եւ կը հաւատամ իսկ, որ դուք այսպիսի խըն-դրոյ մի բնա երես չէք առներ, Հայաստան սիրող հոգիդ՝ հարկաւ բնապէս նորա գաւակներուն վրայ ալ գուք ունի. քող Զեր միջնոր-դութեան շնորհիւ այս պատանեակն ալ այդ իմաստութեան տանա-րին մէջը դաստիարակուելով վաստակալանի հայրենեաց պարծանք մի հանդիսանայ: Այս Ոստանիկ անուն պատանեակն, բնապէս խիստ ուշիմ եւ գուարքամիտ է առ ուսումն, մեծ յոյս կ'երեւի վրան, որ քանի մի տարուան շրջանի մէջը իւր յառաջդիմութեան քայլերը եւարտէ: Հայր, այս խնդիրը Զեր ազնիւ եւ վեհանձն ոգւոյն վստա-հանալով գրեցի, գիտնալով ստոյգ որ Դուք աննախանձ սիրտ կը կրէք, միօրինակ կը սիրէք ամէն հայու գաւակ եւ խորութիւն Զեր հոգիէն հեռու է: Ուրեմն ի սէր վաստակալանի հայրենեաց, նորա պանդոխտ որք գաւակ մը ընդունելու շնորհ ըրէք, որով վաստակալան Արծ-ւին բոլոր իւր հայրենի գաւակներով շնորհապարտ կ'ընէք Զեզ եւ համայն Մխիթարեան ուխտիդ:

Ճշմարիտ հայրենասէր վարդապետիդ տրուալ լծակից

Մ(կրտիչ) Վ(արդապետ) Խ(րմեան)

1864 Օգոստոս 7

Կ. Պօլիս

ՊՆՆՕԹ.

- 1) Դամակին մէջ յիշուած Սերովբէն, Ալիշանի եղբայրն է:
- 2) Յիշուած Ոստանիկը իրապէս ընդունուած է Փարիզի վարժարանը, Ս. Ղազարի դիւանէն միայն այսօրեան կարելի է ճշդել որ նա աշակերտած է 1866 տարիին, եւ մակամունն է Մեսրոպեան:
- 3) Ալիշան պատասխանած է Խրիմեանի նամակին 15 Սեպտեմբերին, որու պատճենը չէ պահուած մեր մօտ:

